ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԳՀԾՁԲ-18/69» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

- Վայրը՝ *Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
- Օրը՝ *29.03.2018թ.*
- Ժամը՝ *11:00*

1. Ընդունել ի գիտություն, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Էքսպերտ» ՍՊ ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի, 45-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի դրույթներով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Էքսպերտ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես նաև կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետով սահմանված ընթացակարգը:

Ընդունել որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	1-ին տեղ զբաղեցրած մասնակցի		
		Անվանումը	Գնային առաջարկը	ԱԱՀ
1	Երևան համայքի սեփականությունը հանդիսացող գույքի /շարժական և անշարժ/ շուկայական գնահատման և հաշվետվության տրամադրման ծառայություններ	Վի էմ-Ար Փի ՍՊԸ	5400000	-

Ընդունել որոշում՝ կողմ-5 դեմ-0

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունել որոշում՝ կողմ- 5 դեմ-0

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ *Գ.Խաչատրյան*
Հանձնաժողովի անդամներ՝ *Ռ.Գրիգորյան*
Ռ.Խալաթյան
Լ.Մանուկյան
Գ.Ներսիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ *Ա. Վարդանյան*